



Զանգվածային լրատվության միջոցների  
զարգացման կայունության ցուցիչ

Մե թ ո ն դ աբ ան ու թ յ ու ն ը

2016

### ԶԿՑ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԶԿՑ-ի սկզբնական փուլը ընդգրկում է հինգ հիմնական «խնդիրներ», որոնք նախատեսված են լրատվության համակարգերի կայունության ու կենսունակության չափման համար: Դրանք են՝ խոսքի ազատության մակարդակը, պրոֆեսիոնալ լրագրությունը, լրատվության աղբյուրների բազմազանությունը, բիզնեսի կառավարումը և աջակցող հաստատությունները: Այս բազմաթիվ «ցուցանիշների» օգնությամբ սահմանվում են յուրաքանչյուր խնդրի պատասխանելու համար անհրաժեշտ կոնկրետ պայմաններ: Այս հինգ խնդրի և դրանց համապատասխան ցուցանիշների հիման վրա կազմվում է մի սանդղակ, որն օգտագործվում է որևէ երկրի լրատվական համակարգը գնահատելու համար՝ ելնելով արդյունավետ և անկախ լրատվամիջոցների համընդհանուր սկզբունքներից: Այս մոտեցման շնորհիվ հնարավոր է դառնում համակողմանի գնահատական տալ լրատվամիջոցների ոլորտին՝ հասկանալով այն բազմաթիվ գործոնները, որոնք կանխորոշում են այն, թե արդյոք նշված ոլորտը բաց է, պրոֆեսիոնալ և տնտեսապես կայուն:

Յուրաքանչյուր երկրում ԶԿՑ-ի հիմքն են կազմում մի խումբ մասնագետներ, ովքեր լրացնում են հարցաշարը, տալիս գնահատականներ կամ գրավոր մեկնաբանություններ, և մասնակցում լրատվամիջոցների ներկայիս վիճակին վերաբերող խմբային քննարկմանը: Քննարկումը և ընդհանուր գործընթացը կազմակերպվում է տեղի համապատասխան մասնագետի կողմից: IREX-ի դերն է աջակցել այս գործընթացին և իրականացնել որակի վերահսկողություն: IREX-ը կարող է կատարել լրատվամիջոցների լրացուցիչ սահմանափակ հետազոտություն և ներկայացնել մեկ լրացուցիչ միավորների խումբ, որն, իր ուժով, համարժեք է ցանկացած մասնագետի գնահատականին (օրինակ՝ եթե կան 12 գնահատող մասնագետներ, IREX-ի գնահատականը կհամարվի որպես 13-րդ մասնագետի գնահատական): ԶԿՑ-ի՝ որպես հետազոտության մեթոդի հաջողությունը պայմանավարված է գործընթացի թափանցիկությամբ, ինչպես նաև տեղի մասնագետների և ղեկավարների մասնակցությամբ: Արդյունքում ունենում ենք յուրաքանչյուր երկրի լրատվամիջոցների վիճակի այնպիսի մանրամասն վերլուծություն, որը կարող է տրամադրվել միայն տեղի լրատվամիջոցների ներկայացուցիչների և մասնագետների կողմից:

ԶԿՑ համակարգը նախագծվել է այնպես, որ այն բավարար ճկունություն ունենա ընդգրկելու որակական դատողություններ, և, միևնույն ժամանակ, հիմնված լինի միավորների ստանդարտ համակարգի վրա, որը հնարավորություն է տալիս կանոնավոր կերպով վերլուծել լրատվական կառույցների գործունեությունը տարբեր երկրներում և ժամանակային առումով՝ երկար տարիների ընթացքում:

Ավելին՝ հատուկ նախագծման շնորհիվ՝ ԶԿՑ-ն կարող է կիրառվել աշխարհի ցանկացած երկրում: Այն կարող է վերլուծել զանազան համակարգեր և դրանց առանձնահատուկ հատկանիշները: Օրինակ՝ պրոֆեսիոնալիզմի և կենսունակության կայունության չափման միավորներն ընդհանուր են ինչպես համայնքային, մասնավոր կամ հանրային, այնպես էլ առցանց, հեռարձակվող լրատվամիջոցների կամ տպագիր մամուլի համար: ԶԿՑ-ն չի քարոզում կողմնակալություն հանրային կամ մասնավոր լրատվամիջոցների հարցում, այլ չափում է լրատվության աղբյուրները, սեփականության ու կառավարման ձևերն իրենց բազմազանության մեջ:

Հետազոտության նպատակն է գնահատել Ձեր երկրի լրատվամիջոցների *ներկա* (նախորդ մեկ տարվա կտրվածքով) իրավիճակը, այլ ոչ թե վաղ անցյալում տեղի ունեցած կամ ապագայում հնարավոր խախտումները: Վերլուծելով միևնույն խնդիրները և ցուցանիշներն ամեն տարի՝ հնարավոր է դառնում համեմատել լրատվամիջոցների ոլորտի զարգացումը կամ անկումը ժամանակի ընթացքում: Այդ իսկ պատճառով այն ծառայում է որպես քարոզչության արդյունավետ միջոց և խրախուսում է լրատվամիջոցների զարգացմանն ուղղված ջանքերը:

**ԽՆԴԻՐ 1. ՕՐԵՆՄԱՐԱԿԱՆ և ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ և ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆԸ ՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆԸ**

**ՕՐԵՆՄԱՐԱԿԱՆ և ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ և ՆՊԱՍՏՈՒՄ ԵՆ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆԸ ՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆԸ**

- Առկա են եվ կիրառվում են խոսքի ազատության օրենսդրական եվ հասարակական պաշտպանության միջոցներ
- Լրատվամիջոցների լիցենզավորումը կամ գրանցումը պաշտպանում է հասարակության շահերը եվ այն անաչառ է, մրցունակ եվ քաղաքական տեսակետից չեզոք
- Լրատվամիջոցների մուտքը շուկա եվ նրանց հարկման կառուցվածքը անաչառ են եվ համեմատելի այլ բնագավառների հետ
- Լրատվության ոլորտի մասնագետների, հանրային լրագրողների եվ լրատվամիջոցների դեմ կատարած հանցագործությունները դատական կարգով ակտիվորեն հետապնդվում են, սակայն այդօրինակ հանցագործությունները հազվադեպ են
- Օրենքը պաշտպանում է պետական կամ հանրային լրատվամիջոցների անկախությունը
- Ջրպարտությունը քաղաքացիական օրենսդրության շրջանակներին պատկանող հիմնահարց է, հանրային պաշտոնյաներն առաջնորդվում են ավելի բարձր ստանդարտներով, զրպարտության գոհ դարձած կողմը պետք է ապացուցի, որ տեղեկատվությունը սուտ է եվ արվել է չար մտադրությամբ
- Հանրային տեղեկատվությունը մատչելի է, տեղեկատվության մատչելիության իրավունքից հավասարապես օգտվում են բոլոր լրատվամիջոցները, լրագրողները եվ հանրությունը
- Տեղական եվ միջազգային նորությունների մատչելիությունը լրատվամիջոցների համար սահմանափակված չէ օրենքով
- Երկրում լրագրող դառնալու համար խոչընդոտ չկա, եվ կառավարությունը լրագրողներին չի պարտադրում լիցենզավորում, սահմանափակումներ կամ հատուկ իրավունքներ

**Խնդիր 2. Լրագրությունը համապատասխանում է որակի պրոֆեսիոնալ ստանդարտներին****ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԵԱՆՈՒՄ Է ՈՐԱԿԻ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻՆ**

- Լրագրությունն արդար է, անաչառ եվ հիմնված համապատասխան աղբյուրների վրա
- Լրագրողներն հետեվում են էթիկայի համընդհանուր ճանաչում գտած եվ ընդունված ստանդարտների
- Լրագրողները եվ խմբագիրներն ինքնագրաքննությամբ չեն զբաղվում
- Լրագրողները լուսաբանում են առանցքային իրադարձություններ ու հարցեր
- Լրագրողների եվ լրատվամիջոցներում աշխատող այլ մասնագետների աշխատավարձերը բավական բարձր են, որպեսզի կանխվի կաշառակերությունը եվ որպեսզի այս մասնագետները շարունակեն աշխատել լրատվության բնագավառում
- Ժամանցային ծրագրերը չեն ստվերում լուրերը եվ տեղեկատվական ծրագրերը
- Լուրերի հավաքման, թողարկման եվ տարածման միջոցներն ու սարքավորումները ժամանակակից են եվ արդյունավետ
- Գոյություն ունեն նեղ մասնագիտական լրագրողներ եվ հաղորդումներ (հետաքննող բնույթի, տնտեսությունը/բիզնեսը, տեղական եվ քաղաքական իրադարձություններ լուսաբանող)

**ԽՆԴԻՐ 3. ԲԱԶՄԱԹԻՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՆ ՀԱՎԱՍՏԻ և ԱՆԱՉԱՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՄԲ**

**ԲԱԶՄԱԹԻՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՆ ՀԱՎԱՍՏԻ և ԱՆԱՉԱՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՄԲ**

- Գոյություն ունեն եվ հասանելի են հանրային եվ մասնավոր լրատվության բազմաթիվ աղբյուրներ (ինչպիսիք են՝ տպագիր, հեռարձակող, առցանց, բջջային զլմ-ները) եվ նրանք առաջարկում են տարբեր տեսակետներ
- Քաղաքացիների ազատ օգտվելը տեղական կամ միջազգային լրատվամիջոցներից չի սահմանափակվում օրենքով, տնտեսապես կամ այլ կերպ
- Պետական կամ հանրային լրատվամիջոցներն արտացոլում են քաղաքական հայացքներ, անկուսակցական են եվ ծառայում են հանրության շահերին
- Անկախ լրատվական գործակալությունները լուրեր են հավաքում եվ տրամադրում լրատվամիջոցներին
- Ոչ պետական լրատվամիջոցները թողարկում են սեփական լրատվությունը
- Զլմ-ների պատկանելության թափանցիկությունը հնարավորություն է ընձեռում սպառողներին հետեվություններ անել լրատվության անաչառության մասին. Զլմ-ների սեփականությունը կենտրոնացված չէ փոքրաթիվ կոնգլոմերատների ձեռքում
- Զլմ-ներն անդրադառնում և ներկայացնում են հասարակական շահերի լայն շրջանակների՝ ներառելով փոքրամասնության լեզվով հեռարձակվող տեղեկատվություն
- Զլմ-ները տրամադրում են լրատվություն եվ տեղեկատվություն տեղական, պետական եվ միջազգային խնդիրների վերաբերյալ

**ԽՆԴԻՐ 4. ԼՐԱՏՎԱՍԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՁՈՂ ԿԵՐՊՈՎ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ, ԻՆՉԻ ԾՆՈՐՀԻՎ ԱՊԱՀՈՎՎՈՒՄ Է ԽՆԲԱԳԻՐՆԵՐԻ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**ԼՐԱՏՎԱՍԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՁՈՂ ԿԵՐՊՈՎ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ, ԻՆՉԻ ԾՆՈՐՀԻՎ ԱՊԱՀՈՎՎՈՒՄ Է ԽՆԲԱԳԻՐՆԵՐԻ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

- Լրատվամիջոցները գործում են որպես արդյունավետ եվ ինքնաֆինանսավորվող ձեռնարկություններ
- Լրատվամիջոցները հասույթ ստանում են բազմաթիվ աղբյուրներից
- Գովազդային գործակալությունները եվ նրանց գործունեության հետ առնչվող ճյուղերը սատարում են գովազդային շուկան
- Գովազդից ստացված հասույթի հարաբերությունն ընդհանուր հասույթի նկատմամբ համապատասխանում է ստանդարտներին
- Պետական լրահատկացումները եվ գովազդը բաշխվում են արդար կերպով, ղեկավարվում են օրենքով եվ բացասաբար չեն ազդում ոչ խմբագրական անկախության ոչ էլ շուկայի վրա
- Շուկայի ուսումնասիրությունը կիրառվում է ռազմավարական ծրագրերի կազմման, գովազդից ստացված հասույթի մեծացման եվ հաղորդումները լսարանի կարիքներին եվ հետաքրքրություններին համապատասխանեցնելու համար
- Հեռարձակող ընկերությունների վարկանիշերը, տպաքանակի մասին տվյալները եվ ինտերնետային վիճակագրությունը հաշվարկվում են վստահելի եվ անկախ կերպով

## ԽՆԴԻՐ 5. ԱԶԱԿՑՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ՝ ԱՆԿԱՄ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ

### ԱԶԱԿՑՈՂ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ՝ ԱՆԿԱՄ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ

- Առեվտրաարդյունաբերողների միավորումները ներկայացնում են լրատվամիջոցների սեփականատերերի եվ ղեկավարների շահերը եվ իրենց անդամներին մատուցում են մի շարք ծառայություններ
- Մասնագիտական միավորումները ջանում են լրագրողների իրավունքները պաշտպանել եվ զարգացնել մասնագիտական լրագրողությունը
- Հկ-ները սատարում են խոսքի ազատությանը եվ լրատվամիջոցների անկախությանը
- Գոյություն ունեն լրագրողի աստիճան շնորհող որակյալ ուսումնական ծրագրեր, որոնք զգալի չափով գործնական գիտելիք են տալիս
- Կարճաժամկետ եվ գործնական վերապատրաստման հաստատություններն ու ուսումնական ծրագրերը հնարավորություն են տալիս լրագրողներին բարձրացնել որակավորումը կամ ձեռք բերել նոր հմտություններ
- Լրատվական սարքավորումները, լրագրաթղթի աղբյուրները եվ տպագրման սարքավորումները զերծ են քաղաքական ներգործությունից, մենաշնորհային չեն եվ դրանց հանդեպ որեվէ սահմանափակում չի կիրառվում
- Լրատվության տարածման ուղիները՝ կրպակները, միջանկյալ ընկերությունները, մալուխային ցանցը, ինտերնետը, բջջային ցանցը եվ այլն զերծ են քաղաքական ներգործությունից, մենաշնորհային չեն եվ դրանց հանդեպ որեվէ սահմանափակում չի կիրառվում
- Տեղեկատվական եվ հաղորդակցման տեխնոլոգիաների ենթակառուցվածքը բավարարում է լրատվամիջոցների եվ հանրության կարիքները

## ՑՈՒՑԱՆԻՇ ՎԱՍՏԱԿԵԼՈՎ

**0** = Ոչ, երկիրը չի համապատասխանում ցուցանիշին. կառավարությունը կամ հասարակական ուժերը կարող են ակտիվորեն խոչընդոտել դրա իրականացմանը:

**1** = Երկիրը համապատասխանում է ցուցանիշին նվազագույն չափով, տարբեր ուժեր կարող են և ակտիվորեն չխոչընդոտել այս նպատակի/խնդրի իրականացմանը, սակայն հնարավոր է, որ գործարար մթնոլորտը չաջակցի դրան, իսկ կառավարությունը կամ մասնագիտական հանրությունը սատարեն մասնակի կամ անարդյունավետ կերպով:

**2** = Երկիրը սկսել է համապատասխանել ցուցանիշին զգալի չափով, սակայն առաջընթացը կամ վերջերս է տեղի ունեցել, և հետևաբար դեռևս վաղ է դատողություններ անել, կամ էլ շարունակում է կախված մնալ ներկա իշխանությունից կամ քաղաքական ուժերից:

**3** = Երկիրը հիմնականում համապատասխանում է ցուցանիշին, և դրա իրականացումը պահպանվել է տարիներ շարունակ և/կամ իշխանության փոխվելուց հետո՝ դրանով իսկ ցույց տալով, որ քննարկվող իրավիճակը կայուն է:

**4** = Այո, երկիրը լիովին համապատասխանում է ցուցանիշին, չի տուժել իշխանության բազմաթիվ փոփոխություններից, տնտեսական տատանումներից, հասարակական կարծիքի փոփոխություններից և/կամ տարբեր հասարակական նորմերից:

Գնահատականները կարող են փոխվել մեկ կամ կես միավորներով (0, 0,5, 1,0 1,5, 2,0, 2,5, 3,0, 3,5 կամ 4,0):